
Ушастый
2

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
Լուսավորության Նախարարության կողմից

Սիդա Պետրոսյան

ԱՍՏԵՂԻԿ

Մայրենիի գիրք-տետր
2-րդ դասարանցիների համար

1-ին մաս

ՀՀ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՆՈՐ ԴՊՐՈՑ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1995

Այս գիրքը
մի՞ քիչ կախարդական է:
Ասե՞մ ինչու:
Այն միայն կարդալու
համար չէ:
Նրա մեջ դու նաև
գրելու ես
քո ստեղծագործությունները,
քո մտքերը,
նկարելու ես,
ներկելու ես
բոլոր նկարները:
Այսինքն՝ դու դառնում ես
այս գրքի
հեղինակներից մեկը:
Թե ինչպիսին կլինի
այն վերջում,
քեզանից է կախված:
Ուրեմն այնպես աշխատիր,
որ վերջում
հպարտանաս քո
գրած-նկարած
գրքով:

ԱՒԴԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՄԱՏԵՆԻԿ
մայրենիի գիրք-տետր 2-րդ
դասարանցիների համար
1-ին մաս, 96 էջ
Եր. «Նոր դպրոց», 1995

© «ՆՈՐ ԴՊՐՈՑ»
հրատարակչություն,
1995

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ»
Կրթական Համալիր
ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ

ՄԱՆՈՒՇԱԿ

Ասա ինձ, մանուշա՛կ, ինչո՞ւ ես այդպես վաղ դուրս եկել մեն-մենակ. դաշտերում ոչ մի տեղ ոչ մի բացվել քեզ նման մի ծաղիկ:

- Ես չունեմ մյուսների գեղեցիկ հասակը ու նրանց հագուստը՝ զարդարուն ու շքեղ, դուք ինձ չեք նկատի, եթե ես երևամ նրանց հետ միատեղ:

վաղ - *շուտ*
զարդարուն - *զարդարված*
շքեղ - *շատ սիրուն, հոյակապ, փառահեղ, նոր, մեծաշուք*
նկատել - *տեսնել*
միատեղ - *նույն տեղում, միասին*

✍ ***Կարո՞ղ ես բառերը գրել իրենց գույգերի կողքին:***

բարձրահասակ - ցածրահասակ

վաղ _____ *անշուք*

միապեղ _____ *տգեղ*

զարդարուն _____ *ցրված*

գեղեցիկ _____ *ուշ*

շքեղ _____ *անզարդ*

Գրեցի՞ր, կեցցե՛ս:

✍ ***Մյուս ծաղիկներից մանուշակը ինչո՞վ է տարբերվում:***

_____

_____

✍ ***Այս շարքից գարնանը վերաբերող բառերն ու բառակապակցությունները դո՛ւրս գրիր:***

սառնամանիք, տերևաթափ, ցնծաղիկ, չամիչ, բողբոջ, կանաչել, դեղնել, ժպտալ, կարկաչել, բափվել, արև, աչիկներ, բանալ, բուր, մանուշակ, հալվել, ծաղկել, ծառ,տոր, ամպ, արագիլ, ծիծեռնակ, շոգ, բերքահավաք:

_____

_____

✍ ***Այդ բառերը գործածելով՝ գարնան մասին պատմի՛ր:***

_____

_____

_____

_____

✍ ***Պատմի՛ր քո սիրած ծաղկի մասին:***

_____

_____

_____

✍ *Քո կարծիքով ինչի՞ համար են ծաղիկները:*

✍ *Շարունակի՛ր հորինել.*

ԻՆՉ ՊԱՏԱՀԵՑ, ԵՐԲ ՄԱՆՈՒՇԱԿԸ ԿՈՐՑՐԵՑ ԳԱՐՆԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Դրսից ձայներ են լսվում: Կարծես արևի ճառագայթներն են փաթ-փաթ զրուցում:
- Ուրեմն գարունը եկել է, դուրս գալու ժամանակն է, - մտածեց մանուշակը:

ՉԱԼ ԿԱՉԱՂԱԿԸ

Չալ կաչաղակը թռչում էր, թռչում ու ծառին նստում: Նստում էր, նստում, պոչիկն էր շարժում: Շարժում էր, շարժում ու երգ էր ասում.

- Կա, չէ, չկա, չէ:

Նորից թռչում էր, թռչում ու ծառին նստում. նստում էր նստում, պոչիկն էր շարժում ու երգ էր ասում.

- Կա, չէ, չկա, չէ,

Նորից թռչում էր, թռչում ու ծառին նստում: Ծառին էր նստում, պոչիկն էր շարժում, պոչիկն էր շարժում ու երգ էր ասում.

- Չկա, չէ, չէ ...

չալ - պուր-պուր, պրավոր

✍ ***Նկարը պատմի՛ր:***

✍ *Լրացրո՛ւ պակասող կտառերը:*

Նա□ում էր, նա□ում, պո□իկն էր շար□ում: Շար□ում էր, շար□ում ու երգ□ էր ասա□մ:

✍ ***Պակասող բառերը լրացրո՛ւ:***

_____ *էր նստում,* _____ *էր շարժում,*

պոչիկն էր _____ *ու երգ էր* _____ *:*

✍ ***Կաչաղակի փոխարեն պատասխանի՛ր:***

- Կաչաղա՛կ, կաչաղա՛կ, ինչի՞ մասին ես անվերջ երգում:

_____

_____

✍ ***Պատմի՛ր կաչաղակի մասին:***

_____

_____

✍ ***Ինքդ հորինի՛ր:***

ՇԱՏԱԽՈՍ ԿԱՉԱՂԱԿԸ

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ԵՍ

Ագռավը մի խեցգետին բռնեց և նստեց ծառին:

Խեցգետինն ուզեց ազատվի, կտցից զատվի-ու ասավ նրան.

- Ոսկեհատիկ ագռա՛վ տատիկ, ո՞վ է մեզնից կեղտոտը:

Ագռավը սեղմեց կտուցը և կռռաց.

- Դ-ռ՜ ...

- Ոսկեհատիկ, ագռա՛վ տատիկ, ո՞վ է մեզնից նախշունը:

Ագռավը բացեց կտուցը ու կռռաց.

- Իհա՜ր կե՛ ես ...

Կտուցը բաց անելուն պես, խեցգետինը կտցից ընկավ ջուրը և իրեն ազատեց:

զատվել - *ազատվել, առանձնանալ, պոկվել*

✍ ***Ինչպիսի՞ն էր այս պապմության ագռավը. շարունակի՛ր:***

ինքն իրենով հիացած, _____

_____

✍ ***Իսկ խեցգետինն ինչպիսի՞ն է:***

_____

_____

✍ ***Պակասող բառերը գրի՛ր:***

Ագռավը մի խեցգետին _____ *և ծառին* _____ *:*

Խեցգետինն _____ *ազատվել ու ասաց.*

_____ *, ագռավ տատիկ, ո՞վ է մեզնից* _____ *:*

Ագռավը կոռաց.

_____ *ագռավ տատիկ, ո՞վ է մեզնից* _____ *.*

Ագռավը կտրուցը _____ *և խեցգետինը* _____ *:*

✍ ***Շարունակի՛ր հորինել:***

Լույսը արդեն բացվում է: Արևը ամպի տակից մեկ-մեկ աչքով է անում: _____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ԱՐՏՈՒՅՏՆ ՈՒ ԵՐԿԻՆՔԸ

Վախենալով, որ երկինքը փուլ կգա, արտույտը պառկեց մեջքի վրա, ոտքերը վեր տնկեց ու աշխատեց դեմ տալ երկնքին:

Տեսնողները ծիծաղեցին նրա վրա.

- Ա՛յ խելքի պուտուկ ճնճղուկ, քո ծղոտե տոտիկներով երկինքը ինչպե՞ս ես պահելու:

- Ես ի՛մ բաժին երկինքն եմ պահելու:

խելքի պուտուկ - դմբլո

Նկարը պատմի՛ր:



✍ ***Շարունակի՛ր հորինել.***

Մի առավոտ արտույտը արթնացավ, հավաքեց անկողինը և լվացվելիս նկատեց, որ կտրուցը չկա:

ՄՈՒԿԸ ՄԿԱՆ ԽՆԱՄԻ ԿԼԻՆԻ

Մուկն ուզում էր աղջկան պսակել, բայց չգիտեր՝ որ ուժեղին ընտրեր իրեն փեսա:

Գալիս է արևի մոտ.

- Արև, ինչ ուժե՞ղ ես:

Արևը բե՝

- Ամպն է ուժեղ:

Գալիս է ամպի մոտ: Ամպը բե՝

- Քամին է ուժեղ:

Քամու մոտ է գալիս: Սա էլ բե՝

- Մարդն է ուժեղ:

Մուկը մարդու մոտ է գալիս: Մարդն էլ բե՝

- Մուկն է ուժեղ:

Որ էդպես է,- ասում է,- ամենից ուժեղը մուկն է էլի, իմ աղջկան էլ նրան կտամ:

✍ *Մուկն ինչպե՞ս կպատմի փեսացու փնտրելու պատմությունը:*

✍ *Նկարի՛ր հեքիաթի բոլոր հերոսներին և պատմի՛ր նրանց մասին:*

✍ *Քո կարծիքով նրանցից ո՞րն է ամենաուժեղը. նրան նամակ գրի՛ր:*

✍ *Սկան անունից բոլորին հրավիրի՛ր իր աղջկա հարսանիքին:*

✍ *Շնորհավորի՛ր մկնուհուն ամուսնության առթիվ և օրհնի՛ր:*

ԽԽՈՒՆՋՆ ՈՒ ՍՈՒՆԿԸ

Նստել էր խխունջը սունկի վրա, բարկանում էր, նեղանում ու անցնող-դարձողին նախատում:

- Էս ի՞նչ է թռչկոտում ճպռոտ ճպուռը, ասես չի կարող ինձ նման ծանր ու մեծ նստել:

Թիթեռները թռչկոտում են, թռչունները ծլվլում, խխունջը նորից կատաղում է.

- Սրանք ի՞նչ են թռչում-թռչկոտում, ի՞նչ են երգում, էլ ուրիշ բան ու գործ չունե՞ն: Ա՜յ, ուրիշ բան եմ ես, ոչ թռչկոտում եմ, ոչ երգում: Թռչելս ո՞րն է, երգելս ո՞րը:

- Է՜, քույրի՛կ խխունջ,- հառաչում է սունկը,- գիտե՞ս ինչու ենք լուռումունջ մնացել էստեղ, ոչ թռչել գիտենք և ոչ էլ՝ երգել:

նախատել - *ամոթանք տալ, մեղադրել, հանդիմանել*

ծանր ու մեծ - *լուրջ*

հառաչել - *տխուր ձայն հանել, հոգոց հանել, ախ քաշել*

ճպռոտ - *կեղտոտ, փնթի, անլվա*



✍ ***Ինչպե՞ս են ավարտվում այս նախադասությունները, գրի՛ր:***

Էս ի՞նչ է թռչկոտում նպռոտ նպուռը _____

- Սրանք ի՞նչ են թռչում-թռչկոտում, _____

✍ ***Ինչու՞ էր խխունջը ծանր ու մեծ նստել:***

_____

_____

✍ ***Իսկ ինչու՞ էր նախատում անցնող - դարձողին:***

_____

_____

✍ ***Ի՞նչ պատասխանեց սունկը խխունջին, գրի՛ր:***

- Սո՛ւնկ, գիտե՞ս՝ ինչու ենք լուռ ու մունջ մնացել:
- Է՛, բույրի՛կ խիտունջ, _____

✍ ***Փորձի՛ր լրացնել բաց թողնվածը և շարունակի՛ր.***

_____ *ծանր ու մեծ նստել էր* _____, *բան ու գործը*

թողած անցնող գնացողին էր _____:

Մի ծեր _____ *գործ էր անում: Ականջի պոչով լսեց* _____,

բարս նայեց ու _____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ՃՈՒՏԻԿԸ

Լինում է, չի լինում մի պստիկ ճուտիկ:

Ա՛յ, այսպիսի ճուտիկ:

Բայց նա կարծում է, թե ինքը մեծ, շա՜տ մեծ է: Երբ ման էր գալիս բակում, փքվում էր, գլուխը բարձր պահում:

Ա՛յ, այսպես:

Ճուտիկը մայրիկ ուներ: Անունը Չալիկ՝ սևո՜ւկ չաղլի՜կ:

Ա՛յ, այսպիսի մայրիկ:

Չալիկը ճուտիկին շատ էր սիրում: Նրան կերակրում էր որդերով: Մի անգամ Չալիկի վրա հարձակվեց ֆեռուկ փիսիկը և քշեց նրան մինչև լճի ափը:

Ա՛յ, սա է սեռուկ փիսիկը:



Ճուտիկը մնաց ցանկապատի մոտ: Հանկարծ նա տեսավ, որ աքլորը բռավ ցանկապատի վրա, թեերը բափ տվեց, վիզը ձգեց:

Ա՛յ, այսպես:

Եվ բարձր ձայնով կանչեց՝ Ծո՛ւղ-ղո՛ւ-ղո՛ւ:

Հետո դես ու դեն նայեց ու ասաց՝

- Մի՞թե ես քաջ չեմ, մի՞թե լավը չեմ:

Այս բանը ճուտիկին շատ դուր եկավ: Ինքն էլ վիզը ձգեց:

Ա՛յ, այսպես:

Եվ ամբողջ ուժով ծլվլաց.

- Պի՛-պի՛-պի՛-պի՛: Ես էլ եմ քաջ, ես էլ եմ լավը:

Բայց սայթաքեց և ընկավ ջրով լիքը փոսը:

Ա՛յ, այսպես:

Գորտը տեսավ ճուտիկին, ծիծաղեց.

- Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛: Ա՛յ պստլիկ, ա՛յ ճստլիկ ճուտիկ, դու ո՞ւր, աքլորն ո՞ւր:

ձգել - ձիգ տալով երկարեցնել
ծլծվալ - բարակ ձայնով ճչալ, բարակ ձայն հանել

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ»
Կրթական Համալիր
ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

✍ *Պատմի՛ր այս պատմության ճուտիկի մասին:*

✍ *Ինչպիսի՞ն էր Չալիկը: Ճիշտ պատասխաններն ընդգծի՛ր:*

ա. սիրուն *դ. սևուկ*
բ. չաղլիկ *ե. երփներանգ*
գ. նիհարիկ *զ. խայտուտիկ*

✍ *Փիսիկը ինչպիսի՞ն էր. ճիշտ պատասխանն ընդգծի՛ր:*

ա. փոփլիկ *դ. սևուկ*
բ. չաղլիկ *ե. չալ*

✍ *Պատասխանդ պատմության որևէ նախադասությամբ հաստատի՛ր:*

✍ *Գրի՛ր աբլորի մասին պատմող հատվածը:*

✍ *Շարունակի՛ր «Ճուտիկը» հեքիաթը:*

Ճուտիկը շփոթված նայեց ու տեսավ

ԱԾՈՒՆ

Դեղնած դաշտերին
Իջել է աշուն,
Անտառը կրկին
Ներկել է նախշուն:
Պաղ-պաղ մեգի հետ
Փչում է քամին,
Քշում է տանում
Տերևը ղեղին:
Տխուր հանդերից
Մարդն ու անասուն
Քաշվում են կամաց
Իրենց տունն ու բուն:



մեգ - *մշուշ, մառախուղ*
հանդ - *դաշտ, արտ, անասունների արածելու տեղ*

✍ *Գույն ունեցող կողերը բանաստեղծությունից դո՛ւրս գրիր:*

_____

_____

✍ *Քամու մասին պատմող հատվածը բանաստեղծությունից դո՛ւրս գրիր:*

_____

_____

_____

_____

✍ *Բանաստեղծության մեջ դաշտերը, անտառը, հանդերը, մեզը, տերևը ինչպիսի՞ն են:*

Նմուշ՝ նախշուն անտառ

_____ *դաշտեր* _____ *մեզ*

_____ *տերև* _____ *հանդեր*

✍ *Բանաստեղծության ո՞ր հատվածում սառնություն, ցուրտ կա, այդ կողերը գրի՛ր:*

_____

_____

_____

✍ *Ինքդ հարմար բառեր գրի՛ր:*

Նմուշ՝ կանաչ դաշտ

_____ *դաշտ* _____ *մեզ*

_____ *տերև* _____ *անտառ*

_____ *քամի* _____ *աշուն*

✍ ***Այս շարքից աշնանը վերաբերող բառերն ու բառակապակցությունները դո՛ւրս գրիր.***

մանրահատիկ անձրև, ծաղկած ծառ, թիպուր երկինք, շոգ, ցյուսաածածկ, պերևաթափ, մերկ անտառ, պաղ քամի, բուք ու բորան, ոսկեզօծ անտառ, ցնհալ:

_____

_____

_____

_____

✍ ***Ո՞ր կողերում է աշունը ավելի լավ երևում:***

_____

_____

_____

_____

ԲԱՐԱԿ ԹԵԼԸ

Մի մարդ թել մանողին բարակ թել պատվիրեց: Սա էլ մանեց: Բայց արի ու տես, որ մարդը չհավանեց ու ասաց.

- Ինձ շատ բարակ թել է պետք:

Մանողն էլ թե՝

- Եթե սա բարակ չէ, ահա քեզ ավելի բարակը,- և դատարկ տեղը ցույց տվեց: Մարդն ասաց, որ ինքը թել չի տեսնում:

- Ես էլ չեմ տեսնում, որովհետև թելը շատ է բարակ:

Հիմարն ուրախացավ, այդ թելից էլի պատվիրեց՝ մեծ գումար վճարելով չեղած թելի համար:

✍ *Ինչպիսի՞ մարդ էր թել պատվիրողը:*

✍ *Իսկ մանո՞ղը:*

✍ *Դո՛ւրս գրիր խորամանկ միտք ունեցող նախադասությունը:*

✍ *Ինքդ հորինի՛ր:*

ՄԱՆՈՂՆ ՈՒ ԻՐ ԽՈՐԱՄԱՆԿ ԹԵԼԵՐԸ

ՏԵՐԵՎԱԹԱՓ

- Ա՛յ փոքրիկներ, ա՛յ սիրուններ,-
Ասավ քամին տերևներին,
- Աշուն եկավ, մոտ է ձմեռ,
Ի՞նչ եք դողում ծառի ծերին:
Ոսկի, դեղին, վառ ծիրանի
Գույներ հագեք խայտաբղետ
Ու ճյուղերից ձեր մայրենի
Եկեք ինձ հետ, փախեք ինձ հետ ...
Եկեք տանեմ հեշտ ու անբև,
Անհետ ճամփով, անհայտ տեղեր,
Չեք իմանա այնուհետև
Էլ ինչ է դող, ինչ է ձմեռ ...
Տերևները հենց լսեցին,
Նախշուն-նախշուն գույներ հագան,
Սվսվալով տխուր երգեր՝
Քամու բևին բռան, փախան:



անհայտ - *ոչ հայտնի, անծանոթ*
սվսվալ - *մեղմ, թույլ ձայնով ավոց հանել*
անբև - *առանց բևի*
այնուհետև - *դրանից հետո*
խայտաբղետ - *տարբեր գույնի, գույնզգույն*
անհետ - *առանց հետքի*

✍ *Շարունակի՛ր լրացնել:*

անհայտ աստղ

անհայտ _____

մեղմ սվսվալ

_____ *սվսվալ*

հայտնաբղեր ծաղիկներ

հայտնաբղեր _____

անհեր կորչել

անհեր _____

✍ ***Գրի՛ր այն հատվածները, որոնցում գույն կա և նկարի՛ր:***

_____

_____

_____

_____

✍ ***Մայրենի ճյուղերից տերևներն ինչպե՞ս հեռացան. այդ հատվածը գրի՛ր:***

_____

_____

_____

_____

✍ ***Աշնանը տերևները ինչպիսի՞ն են:***

Նմուշ՝ վառ ծիրանի տերևներ

_____ *տերևներ*

_____ *տերևներ*

_____ *տերևներ*

_____ *տերևներ*

✍ *Բանաստեղծության ո՞ր տողերում փխրություն կա. այդ հատվածը գրի՛ր և նկարի՛ր:*

✍ *Ըստ վերնագրերի բանաստեղծությունը արչյակ պատմի՛ր.*

ԾԱՌԻ ԾԵՐԻՆ

Խոր աշուն է. շուրով ցմեռ կգա: Փոքրիկ, սիրուն տերևները դողում են ծառի ծերին:

ՔԱՄՈՒ ԴԻՄՈՒՄԸ

ՏԵՐԵՎՆԵՐԸ ՀԵՆՑ ԼՍԵՑԻՆ

✍ *Քո կարծիքով՝ ի՞նչ պատահեց հետո:*

ԱՐԵՎԻ ՀՐԱՄԱՆԸ

Գարնանային մի սիրուն առավոտ արևը բարձրացավ և ասաց աստղերին.

- Դե, սիրո՛ւն աստղիկներ, երկնքի ճրագներ, հիմա գնացեք, գիշերը եկեք:

Ծաղիկներին ու թռչնիկներին ասաց.

- Զարթնեցե՛ք, ծաղիկներ, զարթնեցե՛ք, թռչնիկներ:

Եվ զարթնեցին բոլոր ծաղիկները, թռչնիկները:

- Ես պիտի երգեմ,- ասաց արտույտը:

- Ես պիտի ծաղկեմ,- ասաց վարդը:

- Իսկ ես ի՞նչ պիտի անեմ,- ասաց մուր ամպիկը,- չջրե՞մ երկիրը:

Արևը պատասխանեց.

- Թող երգի արտույտը, թող բացվի վարդը, իսկ մուր ամպիկը, ջրով լիքը, թող գնա հեռանա:

Ծաղիկները բացվեցին, թռչնիկները երգեցին, երեխեքն էլ զարթնեցին ու սկսեցին արևի երգը:



ճրագ - ճավրով կամ շերով լցված անոթ (աման), որի մեջ մտցրած պատրույգը (հատուկ գործվածք) վառում են լույս տալու համար

✍ *Լրացրո՛ւ:*

_____ *արևը բարեշրջացավ և ասաց աստղիկներին.*

_____

_____

✍ *Ամպիկը ինչպիսի՞ն էր այս պատմության մեջ. ընդգծի՛ր ճիշտ պատասխանը:*

ա. մութ *գ. լացկան*

բ. կապույտ *դ. շրով լիքը*

✍ *Ո՞ր հատվածում է դա երևում, գրի՛ր:*

_____

_____

_____

✍ *Գրի՛ր արևի և ամպի խոսակցությունը և նրանց զրուցելիս նկարի՛ր:*

- Ես ի՞նչ պիտի անեմ, _____

_____

- Թող երգի _____

_____

✍ *Պատասխանի՛ր, խնդրում եմ.*

- Դու սիրո՞ւմ ես շատ լինել:

_____

- Ո՞վ է քեզ լինից արբնացնում:

_____

- Արևին ի՞նչ կուզեիր ասել:

_____

_____

_____

✍ *Շարունակի՛ր պատմությունը:*

_____

Առավոտյան արևն արթնացավ ու պատրաստվեց ճամփա ընկնել: Բայց, ա՛յ քեզ բան, կորել էր լուսաբաց տանող ճանապարհը: _____

✍ *Արևին ո՞ ծնողական տունին հրավիրի՛ր:*

_____

✍ *Արևի հացնեն զրեցի՞ր դև, զրի՛ր:*

_____

✍ *Հիմա ո՞ հացնեն զրի՛ր:*

_____

ԳԵՏԱԿԸ

- Ո՞ւր ես վազում
Այդպես արագ,
Ա՜յ դու կայտառ,
Սիրուն գետակ,
Կանգ առ, խաղանք
Էս ծառի տակ:

Ծածն էլ հովտում
Անուշահոտ
Ինձ են մնում
Ծաղիկ ու խոտ,
Հոգնած-ծարավ
Տավարն ու հոտ:

Չէ՛, փոքրի՛կս,
Գնամ պիտի.
Տե՛ս ջաղացը
Գյուղի մոտի,
Պետք է ուժ տամ,
Որ պտտի:

Դե՜, տեսնո՞ւմ ես,
Մնաս բարով,
Ճամփաս ցանած
Հազար գործով.
Դադար չունեմ
Ես մինչև ծով:

կանգ առ - *կանգնիր*
հովիտ - *հարթ տեղ լեռների մեջ*
անուշահոտ - *անուշ, հաճելի հոտ ունեցող, բուրավետ*
ինձ են մնում - *ինձ են սպասում*
դադար - *հանգիստ*
կայտառ - *ժիր, աշխույժ*

✍ Ինչպիսի՞ն է գեպակն այս բանաստեղծության մեջ ճիշտ պատասխանն ընդգծի՛ր:

ա. ուրախ գ. սիրուն
բ. կայտառ դ. տիտուր

✍ Գրի՛ր այն հատվածը, որտեղ գեպակն այդպիսին է:

_____

_____

_____

_____

✍ Բանաստեղծության մեջ ինչպիսի՞ն են տավարն ու հոտը, հովիտը:

_____ տավար ու հոտ _____ հովիտ

✍ Գեպակը ճանապարհին ի՞նչ գործեր է անում:

_____

_____

✍ Երբ գեպակը խոսել կարողանար, ի՞նչ կպատմեր:

_____

_____

✍ Էլ ինչպիսի՞ն կարող են լինել գեպակը, հովիտը, ծաղիկը, խոտը:

_____ գեպակ _____ հովիտ

_____ գեպակ _____ հովիտ

_____ ծաղիկ _____ խոտ

_____ ծաղիկ _____ խոտ

✍ Ինքդ հորինի՛ր.

ԵՐԳՈՂ ԳԵՏԱԿԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

_____

_____

_____

_____

ԱՐԵՎԻ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐԸ

(Կրճատումներով)

Պայծառ արևը բարձրացավ երկինք և ոսկեփայլ ճառագայթները տարածեց երկրի վրա, որ արբնացնի քնածներին:

Առաջին ճառագայթն ընկավ արտույտի վրա: Արտույտը թպրտաց, թափ տվեց թևերը, դուրս թռավ բնից, բարձրացավ վեր ու վեր և սկսեց երգել բարձրաձայն. - ճիվ, ճիվ,ճիվ - ճիլի - վիլի. վուտ-վուտ, վուտ-վուտ-վուտ. ճրոռ... որ մեր լեզվով նշանակում է՝ ինչքան լավ է առավոտ վաղ վեր կենալը, և ինչքան դուրեկան է բարմ օդ ծծելը:

Երկրորդ ճառագայթը նապաստակի վրա ընկավ: Նապաստակը ականջները խլշացրեց, նայեց դես ու դեն, ցատկոտելով մտավ ցողաթաթախ կանաչուտը և սկսեց նախաճաշիկ անել մեղրածոր խոտերով:

Երրորդ ճառագայթը հավաբունն ընկավ: Աքաղաղը թափ տվեց թևերը և կանչեց՝ ծուղրուղո՜ւ... ղո՜ւ-ղո՜ւ-ղո՜ւ: Կանչեց աքաղաղը հավերին, որ ցած իջնեն թառերից և առավոտվա նախաճաշիկն անեն: Հավերը ցած թռան, կոկռացին և աքաղաղի հրավերով սկսեցին քուջուջ անել:

Չորրորդ ճառագայթը փեթակի վրա ընկավ: Մեղուները տաքացան ու դուրս ընկնելով՝ դես ու դեն թռան տզտզալով, որ մեղրածոր ծաղիկներից իրենց սնունդը ստանան:



ականջները խլշացրեց - *լարեց լսողությունը, ականջները շարժեց*

մեղրածոր - *շատ քաղցր ինչ-որ բան, որից մեղր է կաթում, շատ քաղցր*

փեթակ - *մեղուների բույնը, որտեղ նրանք նաև մեղր են պատրաստում*

✍ *Արդյոյսին վերաբերող հայվածը դո՛ւրս գրիր:*

_____

✍ *Հիմա էլ նապաստակին վերաբերող հայվածը գրի՛ր:*

_____

✍ *Ու՞ր ընկան երրորդ և չորրորդ ճառագայթները և ի՞նչ պատահեց, կարո՞ղ ես պատմել:*

Երրորդ ճառագայթը հավաքուն ընկավ: _____

_____

_____

_____

_____

_____

_____

✍ *Այս պատմության մեջ արևը, ճառագայթները, օդը, կանաչուղը, խոտը, ծաղիկները ինչպիսի՞ն են:*

Նմուշ՝ ոսկեփայլ ճառագայթներ

_____ *արև* _____ *օդ*

_____ *ծաղիկներ* _____ *կանաչուղ*

_____ *խոտ*

✍ *Էլ ինչպիսի՞ն կարող են լինել:*

_____ *արև* _____ *օդ*

_____ *արև* _____ *խոտ*

_____ *կանաչուղ* _____ *ծաղիկներ*

_____ *օդ* _____ *ծաղիկներ*

✍ *Ինչպիսի՞ն է քո այս օրը. ի՞նչ ես արել մինչև հիմա:*

✍ *Արպագրի՛ր, բայց նշված բառերի ու արպահայպությունների փոխարեն իմաստով մոտ այլ բառեր ու արպահայպություններ գրի՛ր: Արպագրելուց հետո պապմությունը կշարունակես:*

Մեղուների տանը տաք էր, հաճելի. բոլորը քնած էին: Մի նապաստակ ցատկոտելով մոտեցավ մեղուների տանը, լսողությունը լարեց, բայց ոչինչ չլսեց:

- Տեսնես ո՞վ է բնակվում այստեղ:

Էն ի՞նչն է՝

Թուրն ընկավ

Ձայն չելավ:

Էստեղ պուպուզ,

Էնտեղ պուպուզ,

Մեկ էլ տեսար՝

Երդիկից դուրս:

ՃԱՆՃԸ

Խոնարհ ու հեզ
Մի հոգնած եզ,
Արորն ուսին,
Ճանճը պոզին,
Մի իրիկուն
Գալիս էր տուն:
Մին էլ ճամփին
Մի ուրիշ ճանճ
Հենց նստածին
Ասաց,- Տո՛, մանչ,
Էս եզան հետ
Որտեղի՞ց էդ:
Քիթը տնկած
Ճանճը ասաց.
- Մենք որտեղի՞ց.
Վարում էինք,
Վարատեղի՛ց:

խոնարհ - *լսող, ենթարկվող, հնազանդ*
հեզ - *իջելոր, հանգիստ, մեղմ, խոնարհ*
արոր - *հող վարելու գյուղատնտեսական գործիք*
մանչ - *տղա*
վարատեղ - *արտ, վարելու տեղ*

✍ *Ինչպիսի՞ն է եզն այս առակում. ճիշտ պատասխանները ընդգծի՛ր.*

ա. իսնաբի *գ. հեզ* *ե. հոգնած*
բ. գլուխգովան *դ. չար* *զ. առույգ*

✍ *Ո՞ր հատվածում է դա երևում, գրի՛ր:*

_____

_____

_____

_____

_____

_____

✍ *Ինչպիսի՞ն է պոզին նստած ճանճը. ճիշտ պատասխանը ընդգծի՛ր:*

ա. իսնաբի
բ. քիթը տնկած
գ. խելքը գլխին

✍ *Առակի ո՞ր տողերում է դա երևում. այդ տողերը գրի՛ր:*

_____

_____

✍ *Շարունակի՛ր պատմել առակը:*

Մի հոգնած եզ վարպետեղից տուն էր գալիս: Պոզին մի ճանճ էր նստած:

_____

_____

✍ *Քո կարծիքով՝ եզն ի՞նչ կասեր քիթը տնկած ճանճին:*

_____

_____

✍ ***Ո՞ր ստեղծագործություններից են և ովքե՞ր են. կարո՞ղ ես գրել:***

Նմուշ՝ - Ես ի՞նչ պիտի անեմ, չջրե՞մ երկիրը:

« Արևի հրամանը » ամպիկ

- Դադար չունեմ ես մինչև ծով:

« _____ » _____

- Ես իմ բաժին երկինքն եմ պահելու:

« _____ » _____

- Դուք ինչ չեք նկատի, երբ ես երևամ նրանց հետ միասին:

« _____ » _____

- Ոսկեհատիկ ագռավ տատիկ, ո՞վ է մեզնից նախշունը:

« _____ » _____

- Թռչելս ո՞րն է, երգելս ո՞րն է:

« _____ » _____

ԱՂՎԵՍՆ ՈՒ ՍԱԳԵՐԸ

Օրերից մի օր աղվեսը գալիս է մարգագետին: Այստեղ սագեր են արածելիս լինում, սիրուն, չաղլիկ սագեր:

Աղվեսը ծիծաղում է.

- Ոնց որ ինձ կանչած լինեք. ինչ լա՜վ եք կողք կողքի շարվել: Հիմա ձեզ հերթով անուշ կանեմ:

Սագերը լեղաճաք են լինում, սկսում են աղաչանք-պաղատանք անել.

- Մեզ մի ուտի, աղվե՛ս աղա, խնայի՛ր մեր կյանքը:

- Չէ,- ասում է աղվեսը,- ինչո՞ւ խնայեմ:

Բոլորիդ էլ կուտեմ:

Ի՞նչ անեին խեղճ սագերը:

Վերջապես նրանցից մեկը թե.

- Աղվե՛ս աղա, հրամանքդ, թույլ տուր մեռնելուց առաջ երգենք. շատ չէ, մի երգ:Հենց որ վերջացնենք, մեզ կեր, անուշ լինի: Շարքով էլ կնստենք, որ մեզնից ամենայուղալիներին ջոկես:



- Լավ,- համաձայնում է աղվեսը,- ի՞նչ կա որ, երգե՛ք, կսպասեմ:

Այստեղ առաջին սագը ձայնը գլուխն է գցում, բայց տեսեք, թե ինչ երկար երգ է դուրս գալիս, ի՜նչ երկար երգ:

Ղա՜-դա՜-դա՜ ...

Երկրորդն իսկույն բռնում է կչկչոցի ծայրը.

-Ղա՜-ղա՜-ղա՜, ղա՜-ղա՜-ղա՜...

Մեջ է ընկնում երրորդը.

-Ղա՜-ղա՜-ղա՜, ղա՜-ղա՜-ղա՜, ղա՜-ղա՜-ղա՜...

Վրա է տալիս չորրորդը.

-Ղա՜-ղա՜-ղա՜, ղա՜-ղա՜-ղա՜, ղա՜-ղա՜-ղա՜, ղա՜-ղա՜-ղա՜ ...

Հինգերորդն էլ ետ չի մնում.

-Ղա՜-ղա՜-ղա՜, ղա՜-ղա՜-ղա՜, ղա՜-ղա՜-ղա՜, ղա՜-ղա՜-ղա՜:

Հետո սկսում են աղմկել բոլորը միասին.

-Ղա՜-ղա՜-ղա՜, ղա՜-ղա՜-ղա՜ ...

Երբ սագերի երգն ավարտվի, հեքիաթն էլ կվերջանա:

Դե, սագերը հո հիմա՞ր չեն, մինչև այսօր էլ երգում են.

-Ղա՜-ղա՜-ղա՜, ղա՜-ղա՜-ղա՜...

մարգագետին - *կանաչով և ծաղիկներով ծածկված դաշտ*
խնայել - *իզնալ, չպարծել*

✍ *Ի՞նչ է նշանակում*

լեղանաք անել _____ *աղաչանք պաղատանք անել* _____

յայնը գլուխը գցել _____ *անուշ անել* _____

✍ ***Հեքիաթում ի՞նչ է գրված այս նախադասությունների փոխարեն. գրի՛ր և գրի՛ր:***

ա. Մի անգամ աղվեսը գալիս է մարգագետին:

_____

բ. Հիմա ես ձեզ հերթով կուտեմ:

_____

գ. Սագերը սարսափում են:

_____

դ. Այսրեղ առաջին սագը բարձր երգում է:

_____

ե. Երկրորդն է իսկույն սկսում կչկչալ:

_____

✍ *Հերիաթում գտի՛ր սագերին նկարագրող նախադասությունը և գրի՛ր:*

✍ *Մի քիչ պատմի՛ր այս սագերի և աղվեսի մասին:*

✍ *Մխիթարի՛ր աղվեսին:*

✍ *Մարգագետին նկարի՛ր և նկարագրի՛ր քո նկարածը:*

Ակամայից օդ արա՛:

Աղվեսի քիթը խաղողին չհասավ, ասաց՝ խակ է:

Փորչված աղվեսը երկու ոտքով է թակարդ ընկնում:

✍ *Հիմա ինքդ հորինի՛ր.*

ԵՐԳՈՂ ԾԱՌԵՐԻ ԱՆՏԱՌՈՒՄ

ԱՆՃՈՌՆԻ ՃՈՒՏԻԿԸ

Քսանմեկ օր բուխսը վեր չէր կենում ձվերի վրայից: Արդեն դուրս էին եկել տասներկու բրդոտ ճտեր, մնում էր միայն մի կանաչավուն ձու:

Հանկարծ բուխսը լսեց, որ ձվի ներսից բլսկբլսկացնում են: Իսկույն կտուցով ձուն ջարդեց, և միջից դուրս եկավ ճուտիկը:

Սա նման չէր իր եղբայրներին ու քույրիկներին: Ավելի բրդոտ էր, ավելի դեղին, տոտիկները կարճ-կարճ, կտուցը՝ տափակ:

- Անճոռնի է,- մտածեց մայրը:

Հավն իր ճուտիկներին հավաքեց ու հպարտ-հպարտ, կոքկոքալով գնաց բակ: Բոլորն ապագ-ապագ վազվզում էին: Միայն վերջում դուրս եկած ճուտիկը քայլում էր ծանր ու օրորվելով:

Մայրը ճուտիկներին տարավ առվի ափը քուջուջ անելու:

Անճոռնի ճուտիկը ջուրը տեսավ բե չէ, մեջը ընկավ:

Մայրը սաստիկ ճչում էր, բեերը թափահարում, դեպի ջուրը նետվում: Ճուտիկները ճվճվում էին և դեսուդեն ընկնում, իսկ անճոռնի ճուտիկը հանգիստ լող էր տալիս ջրի երեսին:

Պառավ նանը, աղմուկը լսելով, դուրս վազեց, որ տեսնի, բե ինչ է պատահել:

Լողացող ճուտիկին տեսնելով՝ նա գոչեց.

- Վա՛յ, այս ի՞նչ եմ արել, հավի տակ բաղի ձու եմ դրել:

բուխս - ձվերի վրա նստող մայր հավ (Այդ ձվերից ճտեր են դուրս գալիս:)
անճոռնի - տգեղ, այլանդակ
գոչել - գոռալ, կանչել



✍ ***Նախադասությունները արտագրի՛ր ըստ դեպքերի հաջորդականության:***

Հավը բուխա է նստում:
Անճոռնի ճուտիկը մտավ ջուրը:
Հավը ճուտիկներին տանում է առվի ափ բուջուջ անելու:
Հավ մայրիկը ճվճվում է, դեսուդեն ընկնում, իսկ ճուտիկը հանգիստ լող է տալիս:
Ձվից դուրս է գալիս անճոռնի ճուտիկը:

✍ ***Պատմի՛ր նանին և ճտին վերաբերող հատվածը:***

Պառավ նանը

✍ ***Անճոռնի ճտի անունից պատմի՛ր իր ջուրը մտնելու մասին:***

Հենց առուն տեսա, ընկա մեջը: Ուրախ-ուրախ լողում էի, իսկ հավ-մայրիկը...

✍ ***«Անճոռնի ճուտիկը» հեքիաթի շարունակությունը ինքդ հորինի՛ր:***

ԱՆՃՈՌՆԻ ՃՈՒՏԻԿԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

ԿԱՑԻՆ ԱԽՊԵՐ

Մի մարդ գնաց հեռու երկիր աշխատանք անելու: Ընկավ մի գյուղ: Տեսավ՝ այդ գյուղի մարդիկ ձեռով են փայտ կոտրատում:

— Ախպե՛ր,- ասավ,- ինչո՞ւ եք ձեռով փայտ կոտրում, մի՞թե կացին չունեք:

— Կացինն ի՞նչ բան է,- հարցրին գյուղացիք:

Մարդը իր կացինը գոտիկից հանեց, փայտը ջարդեց, մանրեց, դարսեց մյուս կողմ:Գյուղացիք այս տեսան, վազեցին գյուղամեջ, ձայն տվին իրար.

— Տո՛, եկե՛ք, տեսե՛ք, կացին ախպերը ինչ արավ: Գյուղացիք հավաքվեցին կացնի տիրոջ գլխին, խնդրեցին, աղաչեցին, շատ ապրանք տվին ու կացինը ձեռից առան:

Կացինը առան, որ հերրով կոտորեն իրենց փայտը:

Առաջին օրը տանուտերը տարավ: Կացինը վրա քերավ թե չէ՝ ոտը կտրեց: Գոռալով ընկավ գյուղամեջ:

— Տո՛, եկե՛ք, եկե՛ք, կացին ախպերը կատաղել է, ոտս կծեց:

Գյուղացիք եկան, հավաքվեցին, փայտերը առան, սկսեցին կացնին ծեծել: Ծեծեցին, տեսան բան չդառավ, փայտերը կիտեցին վրան, կրակեցին:

Բոցը բարձրացավ, չորս կողմը բռնեց: Երբ կրակն իջավ, եկան բաց արին, տեսան՝ կացինը կարմրել է: Գոռացին.

— Վա՜յ, տղե՛ք, կացին ախպերը բարկացել է. տեսե՛ք՝ ոնց է կարմրել. որտեղ որ է, մեր գլխին մի փորձանք կբերի: Ի՞նչ անենք:

Մտածեցին, մտածեցին ու վճռեցին տանեն բանտը գցեն:

Տարան գցեցին տանուտերի մարագը: Մարագը լիքը դարման էր. գցեցին թե չէ՝ կրակն առավ, բոցը երկինք բարձրացավ:

Գ-յուղացիք սարսափած վազեցին տիրոջ հետևից թե՝ «Ե՛կ, Աստծու սիրուն, կացին ախպոր բան հասկացրու»:

կիրել - *մի տեղ հավաքել, դիզել, իրար վրա լցնել, կույտ անել*
մարագ - *ուրելիք, չոր խոտ, անասուն պահելու տեղ*
դարման - *չոր խոտ, հացաբույսերի մանրացրած ցողունը*
դարսել - *իրար վրա շարել, դասավորել*
գյուղամեջ - *գյուղի կենտրոն*
տանուտեր - *գյուղի ղեկավարը, գյուղապետ*
բան չդառավ - *ոչինչ չեղավ, բան չպատահեց, բան դուրս չեկավ*
կրակեցին - *կրակ տվեցին, վառեցին*

✍ ***Կարո՞ղ ես գրել՝ ինչ է նշանակում.***

աշխատանք անել _____

իրար ձայն տալ _____

հավաքվել կացնի տիրոջ գլխին _____

կացինը վրա բերել _____

բոցը չորս կողմը բռնել _____

բոցը երկինք բարձրանալ _____

✍ ***Կացնի տիրոջ անունից պատմի՛ր կացինը գյուղացիներին տալու պատմությունը:***

Գնացել էի հեռու երկիր աշխատանք անելու: Ընկա մի գյուղ և ի՞նչ տեսնեմ _____

_____

_____

_____

✍ *Այս նախադասությունները արտագրի՛ր և դասավորի՛ր դեպքերի հաջորդականությամբ:*

Գյուղացիները կացինը վերցրին:
Կացինը գցեցին մարագը, մարագը վառվեց:
Տանուտերը կացինով ուրը կտրեց, որովհետև օգտագործել չգիտեր:
Կացինին ծեծեցին:
Կացինին վառեցին:

✍ *Մանրամասն պատմի՛ր առաջին փորձանքի մասին:*

✍ *Ինքդ հորինի՛ր:*

ԲԱՐԿԱՅԱԾ ԿԱՅՆԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

ԾԱՂԻԿՆԵՐԸ

— Ո՞ւր գնացին ծաղիկները:
— Սո՜ւս, քնած են հողի տակ,
Տաք ծածկված ողջ ձմեռը
Ձյուն ծածկոցով սպիտակ:
Կգա գարնան արևն էլ ետ
Իր շողերով կենդանի,
Ձմռան սաստիկ ցրտերի հետ
Ձյուն ծածկոցը կտանի:
«Ելեք,- կասի,- իմ մանուկներ».
Ու հենց նրանք իմանան,
Դուրս կհանեն գլխիկները,
Աչիկները կբանան:

ողջ - ամբողջ
սաստիկ - խիստ, ուժեղ

✍ *Ծաղիկները ինչպե՞ս են ձմեռն անցկացնում գրի՛ր այդ հատվածը:*

_____

_____

_____

✍ *Իսկ գարունն ինչպե՞ս կգա. այդ հատվածն էլ գրի՛ր:*

_____

_____

_____

✍ *Գարունը ծաղիկներին ինչպե՞ս է դիմում:*

_____

_____

_____

✍ *Պատմի՛ր այն ծաղիկների մասին, որոնք առաջինն են գլխիկները հանում և բացում աչիկները:*

_____

_____

_____

✍ *Ինչպե՞ս էր բանաստեղծության մեջ.*

տաք ծածկված _____ *ցուրտեր*

_____ *ծածկոց* _____ *շողեր*

✍ *Կարո՞ղ ես ինքդ շարունակել:*

Ձմռանը՝ ձյունե ծածկոց:

Ամռանը՝ _____ *ծածկոց:*

Գարնանը՝ _____ *ծածկոց:*

Աշնանը՝ _____ *ծածկոց:*

✍ *Հեռագրով ծաղիկներին հայտնի՛ր զարնան գալու մասին:*

✍ *Ծաղիկների հասցեն գրեցի՞ր ... չէ՞. դե գրի՛ր:*

✍ *Պակասեցրո՛ւ հեռագրիդ բառերը, որ քիչ վճարես փոստին:*

✍ *Ինքդ պատմություն հորինի՛ր:*

ԻՆՉ ՊԱՏԱՀԵՑ, ԵՐԲ ԾԱՂԻԿՆԵՐԸ ԱՐԹՆԱՑԱՆ ՉՄՌԱՆԸ

ՄԱՆՈՒԿՆ ՈՒ ՋՈՒՐԸ

Ամպոտ սարից ուրախ ձենով
Ջուր է գալիս, անցնում շենով,
Մի բուխ մանուկ դուրս է վազել,
Ձեռն ու երես պաղ լվացել,
Լվացել է ձեռն ու երես,
Ու դարձել է՝ խոսել էսպես.

- Դու ո՞ր սարեն կուգաս, ջրի՛կ,
Իմ պաղ ջրիկ ու անուշիկ:
- Ես էն սարեն կուգամ մթին,
Որ հին ու նոր ձյունն է գլխին:

- Դու ո՞ր առուն կերթաս, ջրի՛կ:
Իմ պաղ ջրիկ ու անուշիկ:
- Ես էն առուն կերթամ զվարթ,
Ուր ափերն են շուշան ու վարդ:

- Դու ո՞ր այգին կերթաս, ջրի՛կ,
Իմ պաղ ջրիկ ու անուշիկ:
- Ես էն այգին կերթամ դալար,
Որ տերն է ժիր, մեջն այգեպան:



շեն - *բնակավայր, գյուղ*
բուխ - *սնուկ*
դալար - *կանաչ*

✍ ***Բանաստեղծության մեջ ինչպիսի՞ն են սարը, մանուկը, ջրիկը, այգեպանը, ֆյունը:***

հին ու նոր ֆյուն

_____ *սար* _____ *ջրիկ*

_____ *մանուկ* _____ *այգեպան*

✍ ***Գրի՛ր՝ ջրիկը որ սարից է գալիս:***

_____

_____

✍ ***Իսկ դեպի ո՞ր առուն է գնում:***

_____

_____

✍ ***Ի՞նչ հարցեր է տալիս մանուկը ջրին:***

1. Ո՞ր սարից ես գալիս, ջրի՛կ:

2. _____

3. _____

✍ ***Քո կարծիքով առուն ինչի՞ մասին է անվերջ պատմում:***

_____

_____

_____

✍ ***Առուն ինչպիսի՞ն կարող է լինել.***

զուլալ *առու* _____ *առու*

_____ *առու* _____ *առու*

✍ *Շարունակի՛ր.*

լճակ - լիճ - ծով - օվկիանոս

վայրկյան - _____

ջրիկ - _____

միլիմետր - _____

✍ *Հիմա ինքդ հորինի՛ր:*

ԱՌՈՒՆ ՈՒ ՔԱՐԸ

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ՀՆԱՐԱԳԵՏ ՆԱՊԱՍՏԱԿԸ

Լինում է, չի լինում մի հայր նապաստակ է լինում:

Մի օր նապաստակը տնից դուրս է գալիս, տեսնում է տան չորս բոլորն աղվեսներն են վազվզում:

- Վա՜յ իմ գլխին, հիմա ի՞նչ պիտի անեմ, իմ փոքրիկներին ինչպե՞ս սրանց ձեռքից ազատեմ, - ասում է նապաստակը:

Բայց հայրիկը փորձված նապաստակ է: Անպատճառ մի ճար կգտնի: Պստիկ շլդիկը նայում է ու զարմանում, թե այս ի՞նչ է անում հայրիկը. ներկերը հանել է, մի տախտակ դրել իր առջև և վրձինով ինչ-որ գրում է:

Տեսնես այդ ի՞նչ է գրում:

Հայրիկը տախտակը տարավ, տնկեց հենց իրենց տան գլխին ու սուս ու փուս մտավ ներս:

Գալիս է աղվեսն ու կարդում.

«Այստեղ ապրում է պարոն շունը: Ով գայլի կամ աղվեսի տեղ գիտի՝ խնդրեմ իմաց տա»:

- Վա՜յ, տունս քանդվեց, - կանչում է աղվեսն ու լեղապատառ փախչում:

- Ա՛յ կնիկ, երեխանե՛ր, ժողովո՛ւրդ: Պարոն շունը մեր անտառում է բնակվել: Վե՛ր կացեք, գլխներս ազատենք, շո՛ւտ, քոչենք հեռո՜ւ, հեռո՜ւ...

Ա՜յ թե ուրախացան նապաստակները:

Նեցցե՛ մեր հնարագետ հայրիկը:



հնարագետ - *ամեն ինչի ելքը գտնող*
փորձված - *փորձ ունեցող*
անպայմանատ - *անպայման*
լեղապատառ - *շատ վախեցած*
քոչել - *ունեցվածքը հավաքել ու գնալ ուրիշ տեղ ապրելու*

✍ ***Ի՞նչ է նշանակում.***

վա՜յ իմ գլխին - _____

չեռքից ազատել - _____

նար գտնել - _____

իմաց տալ - _____

լեղապատառ փոսիչել - _____

✍ ***Դո՛ւրս գրիր այն հատվածը, որտեղ պատմվում է հայր նատպատակի փորձված, հնարագետ լինելու մասին:***

_____

_____

✍ ***Հայր աղվեսն ինչպիսի՞ն է:***

_____

_____

✍ ***Ինչո՞ւ ես այդպես կարծում:***

_____

_____

✍ ***Որտե՞ղ են ապրում նատպատակի ընտանիքը և մյուսները. ընդգծի՛ր ճիշտ պատասխանը:***

գյուղում *քաղաքում* *անտառում* *դաշտում*

✍ ***Գրի՛ր այն նախադասությունը, որը տեղեկություն է տալիս այդ մասին:***

_____

✍ *Հնարագետ նապաստակի անունից գլուխ գովելով պատմի՛ր այս պատմությունը:*

- Տեսեք՝ ես ի՞նչ խելացի նապաստակ եմ, է՞:

✍ *Հիմա ինքդ հորինի՛ր*

ԻՆՉՈ՞Վ ԵՆ ՆԱՊԱՍՏԱԿԻ ԱԿԱՆՋՆԵՐԸ ԵՐԿԱՐ

ԻՐԻԿՈՒՆ

Արևը շատ էր հոգնել, մաղ էր եկել ամբողջ օրը.
«Հերիք է, ասավ,
Գնամ պառկեմ ու քնեմ»:

Տերևն ուրախ սվսվում էր, որ կանգ առավ.
«Էս ի՞նչ է, ասավ,
Արևն էլ չի երևում,
Ես էլ պառկեմ ու քնեմ»:

Թռչնակը երգում էր ծառի վրա, հանկարծ լռեց.
«Էս ի՞նչ է, ասավ,
Ո՛չ տերևն է սվսվում,
Ո՛չ արևն է երևում,
Ես էլ գնամ ու քնեմ»:

Նապաստակը ոստոստում էր թփերի տակ, որ ականջը սրեց.
«Էս ի՞նչ է, ասավ,
Ո՛չ թռչնակն է ծլվլում,
Ո՛չ տերևն է սվսվում,
Ո՛չ արևն է երևում,
Ես էլ գնամ ու քնեմ»:

Որսկանը անտառում որս էր որոնում, կանգնեց.
«Էս ի՞նչ է, ասավ,
Ո՛չ նապաստակն է վազ տալի,
Ո՛չ թռչնակն է ծլվլում,
Ո՛չ տերևն է սվսվում,
Ո՛չ արևն է երևում,
Ես էլ գնամ ու քնեմ»:



Լուսինը ծագեց, ցած նայեց, տեսավ.

«Էս ի՞նչ է,- ասավ,-

Ո՛չ որսորդն է ման գալի,

Ո՛չ նապաստակն է վազ տալի,

Ո՛չ թռչնակն է ծլվլում,

Ո՛չ տերևն է սվսվում,

Ո՛չ արևն է երևում,

Մենակ ես եմ, որ անքուն

Քեֆ եմ անում երկնքում»:

ուպոսպալ - թռչկոտել, թռվռալ, ցատկոտել

✍ ***Թվարկի՛ր բանաստեղծության բոլոր հերոսներին, պատմի՛ր նրանց մասին:***

_____

_____

_____

_____

_____

_____

✍ ***Բանաստեղծության մեջ մինչև քնելը տերևն ուրախ սվսվում էր, իսկ մյուսներն ի՞նչ էին անում:***

Թռչնակը _____ *էր:*

Նապաստակը _____

Արևը _____

Որսկանը _____

✍ *Քեզ դուր եկած հատվածը բանաստեղծությունից դուրս գրիր և նկարիր:*

✍ *Բարի գիշեր մաղթիր բանաստեղծության հերոսներին:*

✍ *Հիմա էլ ողջունիր լուսնին:*

✍ *Իսկ լուսինը ի՞նչ կասի, երբ քնելու գնա:*

✍ *Ի՞նչ կարող ես պատմել արևի և լուսնի մասին:*

✍ *Շարունակի՛ր գրել՝ ինչպե՞ս կարթնան արևը, կեռևը, թռչնակը, նապաստակը և որսորդը:*

Արևը շատ էր բնել, աչքերը բացեց. «Էս ի՞նչ է,- ասաց,- լուսինն էլ չի երևում, ելնեմ աշխարհը լուսավորեմ»:

✍ *Գիշերը չեր կանը ի՞նչը և ո՞վ է բնում:*

✍ *Ինքդ հորինի՛ր:*

ԱՐԵՎՆ ՈՒ ԾԱՂԻԿԸ

ՁՄԵՌ

Ծառը մերկացավ,
Զրկվեց տերևից,
Ձյունի փաթիլներ
Իջան վերևից:

Ձյուն ու ցուրտ եկան,
Առու, գետ լռեց,
Իր արծաթ գորգը
Ձմեռը փռեց:

Ձյունը ծնկահար
Նստեց մեծ ճամփին,
Սպիտակ հյուսերը
Կիտեց գետափին:

ծնկահար *- ծնկներին հասնող*

կիտել *- կուտակել, դիզել, մի տեղ հավաքել*



✍ *Բանաստեղծության բառապողերը նկարի՛ր՝ խախտելով դրանց հերթականությունը: Տուր կողքիդ նստողին, որ նկարների կողքին գրի համապատասխան բառապողերը:*

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

✍ *Բանաստեղծության մեջ ինչպիսի՞ն են գորգը, ֆյան հյուսերը, ֆյունը, ճամփան:*

Նմուշ՝ մեծ ճամփա

_____ *գորգ* _____ *ֆյուն*

_____ *հյուսեր* _____ *ճամփա*

✍ *Հիմա ինքդ հարմար բառեր գրի՛ր:*

ինչպիսի՞ *փաթիլ* *ինչպիսի՞* *ֆմեռ*

_____ *փաթիլ* _____ *ֆմեռ*

_____ *փաթիլ* _____ *ֆմեռ*

ինչպիսի՞ *ֆյուն* *ինչպիսի՞* *ցուրտ*

_____ *ֆյուն* _____ *ցուրտ*

_____ *ֆյուն* _____ *ցուրտ*

✍ *Ձմեռն ինչո՞վ է տարբերվում տարվա մյուս եղանակներից:*

Ականջիդ օղ արա՛:

Ձմեռվա վարդը կրակն է:

Ամառվա փուշ՝ ձմեռվա ճուշ:

Ամառ բեր, ձմեռ կեր:

✍ ***Ինքդ հորինի՛ր:***

ՁՅԱՆ ՓԱԹԻԼԸ

ՍՈՒՏԼԻԿ ՈՐՍԿԱՆԸ

Հորս կնունքով, մորս ծնունդով, վեր կացանք մի օր հինգ ու վեց հոգով, բրով-բվանքով որսի գնացինք: Հաղին էր, Հյուղին էր, Չատին էր, Մատին էր, ես էի, գնացինք որսի...

Սարեր, ձորեր դուզ գնացինք, որտեղ որս կար՝ սուս ու փուս գնացինք, որտեղ ահ էր՝ կուզ ու կուզ գնացինք...

Գնացի՜նք, գնացի՜նք, շատ թե քիչ, մին էլ տեսնենք երեք լիճ. երկուսը ցամաք, մընի մեջ էլ ըսկի ջուր չկա: Մին էլ, ըիը, մտիկ տանք, որ էս անջուր լճում լողում են, ճչում երեք հատ սպիտակ բադ, երկուսը սատկած են, մինն էլ կենդանի չի:

- Հաղի՛, տո՜ւր, հա տո՛ւր:

- Թե՝ բվանք չունեմ:

- Հյուղի՛, տո՛ւր, հա տո՛ւր:

- Ես էլ չունեմ:

- Չատի... Մատի...

- Մենք էլ չունենք:

- Բա ի՞նչ անենք...

Հորս ձեռին կարճ ու երկար, հաստ ու բարակ մի փետ կար. երեսն առավ, նշան դրեց, մին էլ տրա՜ք, որ կրակեց...

Նա կրակեց, ես զարկեցի. որ զարկեցի՝ փռվեց էսպես - ամեն բեը հինգ գազ ու կես...

- Հաղի, դանա՜կ...

Թե՝ դանակ չունեմ:

- Հյուղի, դու...

- Ես էլ չունեմ:

- Չատի՞, Մատի՞...

- Մենք էլ չունենք...

- Բա ի՞նչ անենք...

Հերս էլ ունի, բերան չունի:

Էս անբերան դանակը քաշեցինք: Հաղին մորթեց, չկարաց, Հյուղին մորթեց, չկարաց, Չատին չկարաց, Մատին չկարաց, հերս էլ չկարաց, ե՛ս քաշեցի մորթեցի:

Մորթեցի, վեր գցեցի. բաղ՝ մի ասի, մի գոմեշ՝ ասա: Հաղին շալակեց, չկարաց,Հյուղին շալակեց, չկարաց, Չատին չկարաց, Մատին չկարաց, հերս էլ չկարաց, ե՛ս շալակեցի: Շալակեցի, գնացինք:

Գնացինք, գնացինք, հասանք մի տեղ, մին էլ տեսնենք երեք գեղ, երկուսի տեղն իսկի չի երևում, մընումն էլ իսկի շենլիկ չկա: Էս անշեն գեղում դես ման եկանք, դեն ման եկանք, մի տուն գտանք, մեջը՝ երեք պառավ, երկուսը՝ մեռած, մընի բերանումն էլ շունչ չկա:

- Տղերք,- ասինք,- եկեք բաղով փլավ անենք:

Էս անշունչ պառավը գնաց դես ման եկավ, դեն ման եկավ, կես բրինձ գտավ, երեք պղինձ, երկուսը՝ ծակ, մինն էլ իսկի տակ չունի:

Ջուրը լցրինք էս անտակ պղինձը, մեջը ածինք բաղն ու բրինձը, անկրակ եփեցինք: Եփեց, եփեց, միսն ու բրինձը գնացին, մնաց ջուրը:

Որսից եկած սոված մարդի՞կ, վրա եկանք, կերա՞նք, կերա՞նք. ո՛չ աչքներս բան տեսավ, ո՛չ բերաններս բան մտավ:

դուզ - ուղիղ
գազ - չափի միավոր
բվանք - հրացան
շենլիկ - լրուն

Ի՞նչ է նշանակում.

սուս ու փուս - _____

մրիկ տալ - _____

մընի բերանում էլ շունչ չկա - _____

ո՛չ աչքներս բան տեսավ, ո՛չ բերաններս բան մտավ - _____

ամեն բևը հինգ գազ ու կես - _____

✍ ***Այս նախադասություններին համապատասխան նախադասությունները գրի՛ր ու գրի՛ր:***

Որտեղ որս կար՝ լուռ գնացինք:

Բավականին գնացինք, մեկ էլ տեսանենք երեք լիճ. երկուսը՝ ցամաք, մեկն էլ՝ անջուր:

Նա կրակեց, ես զարկեցի, որ զարկեցի՝ փռվեց էապես - բևերը՝ երկա՜ր-երկար:

Մորթեցի, գցեցի, մի հսկայական բադ էր:

Էս անշեն գյուղում այս ու այն կողմ ման եկանք, մի տուն գտանք. մեջը՝ երեք պառավ, երկուսը՝ մեռած, մեկը՝ անշունչ:

✍ ***Պատմի՛ր ըստ տրված վերնագրերի:***

ԳՆԱՑԻՆՔ ՈՐՍԻ

ԵՐԵՔ ԲԱԴ

ԵՐԵՔ ՊԱՌԱՎ

ԲԱԴՈՎ ՓԼԱՎ

✍ *Պատմի՛ր սուպլիկ որսկանի մասին. նա միայն սուպլի՞կ էր, թե՞ ...*

✍ *Հերիաթից դո՛ւրս գրիր ամենահետաքրքիր հատվածը:*

✍ *Սուպլիկ որսկանի անունից բոլորին հրավիրի՛ր բառով փլավ ուտելու:*

✍ *Անշունչ պառավի անունից շարունակի՛ր պատմել «Սուպլիկ որսկանը»:*

Մեր անշեն գյուղում երեք պառավ ենք ապրում. երկուսը՝ մեռած, իմ բերանում էլ ընկի շունչ չկա:

Մի իրիկուն, որ առավոտ էր, մեր գյուղ եկավ վեց սուպլիկ որսկան, հինգը _____

✍ *Նամակ գրի՛ր սուպլիկ որսկանին:*

✍ *Սուպլիկ որսկանի անունից նոր սուպլիկ պատմություն հորինի՛ր։*

ՈՉ ՄԻ ԲԱՆԻՑ ՄԱՐԴՈՒԿԸ

Կար չկար ոչ մի բանից մարդուկ կար: Ոչ մի բանից մարդո՞ւկ: Այո, նրա քիրն էլ էր ոչ մի բանից, բերանն էլ: Հագին բա՜ն չկար, կոշիկներն էլ ոչ մի բանից էին:

Մի օր մարդուկը քայլում է ճամփով, որ ոչ մի տեղ չէր տանում, և հանդիպում է ոչ մի բանից մկնիկի:

- Լսի՛ր, - ասում է մարդուկը, - դու կատուներից չե՞ս վախենում:

- Ո՜չ, - պատասխանում է մկնիկը: - Այս երկրում կատուներն էլ են ոչ մի բանից, նրանց բեղերն էլ, ճանկերն էլ: Իսկ ես պանիր եմ սիրում: Ես ուտում եմ միայն անցքերը: Ճիշտ է, նրանք հոտ չունեն, բայց քաղցր են:

- Իմ գլուխը պտտվեց, - ասաց ոչ մի բանից մարդուկը:

- Եվ եթե նույնիսկ գլուխդ պատին տաս, ոչ մի բան էլ չի լինի:

Մարդուկը որոշեց փորձել. մի պատ գտավ, որ գլուխը պատին տա: Բայց տես ինչ դուրս եկավ՝ պատն էլ էր ոչ մի բանից: Եվ քանի որ մարդուկը ուժեղ էր թափ առել, խփելիս անցավ պատի մյուս կողմը: Այնտեղ ոչի՜նչ չկար:

Մարդուկը այնքան հոգնեց այդքան ոչ մի բանից, որ քնեց:

Երազում տեսավ՝ իրը ինքը ոչ մի բանից մարդուկ է, քայլում է ոչ մի տեղ չտանող ճանապարհով, հանդիպում ոչ մի բանից մկնիկի:

Երազում մարդուկը նույնիսկ պանրի անցքեր կերավ: Ճիշտ էր ասում մկնիկը՝ այդ անցքերը իսկապես հոտ չունեին և քաղցր էին:



✍ *Հեքիաթից դո՛ւրս գրիր ամենազարմանալի հատվածը:*

✍ *Շարունակի՛ր մկնիկի խոսքերը:*

Նրանց բեղերը ոչ մի բանից են

✍ *Մարդուկի անունից շարունակիր պատմել մինչև վերջ:*

Գլուխս խփեցի իմ գրած պատին:

✍ *Նկարի՛ր և նկարագրի՛ր ոչ մի բանից մկնիկի բույնը:*

✍ *Ինչպիսի՞ն է ոչ մի բանից պանիրը:*

Հանդիպել են ոչ մի բանից մուկն ու ոչ մի բանից կապուն.

✍ *Պատմի՛ր ամենաուրախությունքիր ոչ մի բանիցի մասին:*

Լինում է չի լինում _____ *, որը ոչ մի բանից էր:*

_____

_____

_____

_____

✍ *Շարունակի՛ր:*

Մի շատ տաքսիաբակ ճանապարհ կար: Ոչ ոք դրանից զուր չէր հանում, որովհետև այն

ոչ մի տեղ չէր տանում: _____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ԹԱՐՍ ՀԱՐՑԵՐ

Կար-չկար մի տղա, որն ամբողջ օրը սրան-նրան ձանձրացնում էր հարցերով: Հարցեր տալը, իհարկե, վատ բան չէ, ընդհակառակը, հարցասիրությունը գովելի է, բայց վատն այն է, որ այդ տղայի հարցերին ոչ ոք չէր կարողանում պատասխանել:

Ասենք, գալիս էր ու հարցնում.

- Ինչո՞ւ դարակները սեղան ունեն:

Մարդիկ զարմանքից աչքերը չռում էին, կամ էլ հենց այնպես պատասխանում.

- Դարակները նրա համար են, որ նրա մեջ որևէ բան դնեն. օրինակ՝ սպասք, դանակ, պատառաքաղ և այլն:

- Ես գիտեմ՝ ինչի համար են դարակները. բայց ինչո՞ւ դարակները սեղան ունեն:

Մարդիկ շարժում էին գլուխները և հեռանում:

Մի ուրիշ անգամ նա հարցնում էր.

- Ինչո՞ւ պոչը ձուկ ունի:

Կամ թե՝

- Ինչո՞ւ բեղերը կատու ունեն:

Տղան մեծանում էր, բայց շարունակում էր մնալ ինչուիկ, և այն էլ՝ ոչ թե սովորական, այլ՝ բարս ինչուիկ: Մեծանալուց հետո էլ նա դիմում էր բոլորին զանազան հարցերով: Պարզ է, որ ոչ ոք չէր կարող պատասխանել նրա հարցերին: Բոլորովին հուսահատվելով՝ բարս ինչուիկը տեղափոխվեց մի սարի գագաթ, իր համար խրճիթ շինեց և այնտեղ հնարում էր նոր-նոր հարցեր: Հնարում էր, գրում տետրի մեջ, իսկ հետո մեծ տանջանքով աշխատում գտնել նրանց պատասխանները: Սակայն ամբողջ կյանքում նա այդպես էլ երբեք չգտավ իր հարցերի պատասխանները:

Եվ ինչպե՞ս գտներ, եթե նրա տետրում գրված էր. «Ինչո՞ւ ստվերը բարդի ունի: Ինչո՞ւ ամպերը նամակ չեն գրում: Ինչո՞ւ նամականիշները գարեջուր չեն խմում»:

Աստիճանաբար նրա մորուքն աճեց, մի երկա՜ր մորուք դարձավ, նա չէր էլ մտածում այն սափրել. դրա փոխարեն նա հորինում էր նոր հարց. «Ինչո՞ւ մորուքը դեմք ունի»:

Երբ նա մեռավ, մի գիտնական ուսումնասիրեց նրա կյանքը և կատարեց զարմանալի հայտնագործություն. պարզվեց, որ այդ ինչուիկը սովոր էր գուլպաները բարսերես հագնել և այդպես էլ հագնում էր իր ողջ կյանքում: Հենց այդ պատճառով էլ մինչև վերջ չսովորեց ճիշտ հարցեր տալ:

Հապա նայիր քո գուլպաներին, ճի՞շտ ես հագել:

բոթվել - *շարժել, թափ տալ*
զանազան - *տարբեր տեսակի*

✍ ***Վերնագրի՛ր այս հատվածը:***

_____

Մի տարօրինակ տղա կար: Նա միշտ թարս հարցեր էր տալիս:
- Ինչո՞ւ դարակները սեղան ունեն:
- Ինչո՞ւ պոչը ձուկ ունի:
- Ինչո՞ւ բեղերը կատու ունեն:
Իսկ նրա հարցերին ոչ ոք չէր կարողանում պատասխանել:

✍ ***Հիմա ինքդ համառոտ պատմի՛ր:***

ԹԱՐՄ ԻՆՉՈՒԻԿԸ ՀԵՌԱՆՈՒՄ Է ՔԱՂԱՔԻՑ

_____
_____
_____

ԻՆՉՈՒԻԿԻ ԳԱՂՏՆԻՔԸ

_____
_____
_____

✍ ***Պատասխանի՛ր թարս հարցերին:***

ԻՆՉՈ՞Ւ ԿՆՃԻԹԸ ՓԻՂ ՈՒՆԻ

_____
_____ _____
_____

ԻՆՉՈ՞Ւ ԴՈՒՌԸ ՏՈՒՆ ՈՒՆԻ

_____
_____
_____

ԻՆՉՈ՞Ւ ԱՍՏՂԵՐԸ ԵՐԿԻՆՔ ՈՒՆԵՆ

ԻՆՉՈ՞Ւ ԱՄՊԵՐԸ ՆԱՄԱԿ ՉԵՆ ԳՐՈՒՄ

✍ *Հեքիաթից դո՛ւրս գրիր ամենահետաքրքիր հատվածը:*

✍ *Ինքդ քարս հարցեր գրի՛ր: Տուր կողքիդ նստողին, որ փորձի պատասխանել:*

✍ *Ինքդ հորինի՛ր.*

ԹԱՐՄ ԻՐԵՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ

Ես ճամփորդել շատ եմ սիրում: Դա շատ լավ է: Բայց պետք մի անգամ ինձ հետ ինչ պատահեց

ՊԱՀՄՏՈՑԻ

Մի անգամ Մուրը որոշեց պահմտոցի խաղալ Լուսնի հետ:

Նա թաքնվեց տների, ծխնելույզների ետևում և շունչը պահած այնքան նստեց, մինչև Լուսինն անշտապ մոտեցավ ու գտավ նրան:

Մեկ-մեկ էլ Մուրը թաքնվում էր ճանապարհն անցնող կատվի կամ շան ետևում: Նա կարողանում էր ճարպկորեն թաքնվել Լուսնից:

Արևը ծագեց ու փոխվեց ամեն ինչ:

- Ա՛յ, այդպես,- ասաց Լուսինը,- տեսնենք Արևից ո՞ւր պիտի փախչես:

- Երբ երեխաները դպրոց գնան, նրանց ետևում կթաքնվեմ,- պատասխանեց Մուրը: - Ես կդառնամ նրանց ստվերը:

- Բայց երբ երեխաները մտնեն դպրոց, այդ ժամանակ ո՞րտեղ կթաքնվես: Հիմարի՛կ, ես քեզ լավ խորհուրդ կտամ. թաքնվի՛ր Երկրի մյուս կողմում, թե չէ Արևն անմիջապես կգտնի քեզ:

- Չի գտնի,- պատասխանեց Մուրը: - Կտեսնես, որ չի գտնի:

Բայց Արևն ավելի ու ավելի բարձրացավ: Մուրն ստիպված նահանջեց դեպի Երկրի մյուս կողմը, ու այնտեղ գիշեր եղավ: Իսկ այս կողմում Արևի հետ պահմտոցի խաղալու համար մնացին միայն մի քանի փոքրիկ մուգ շերտեր:

Այդ շերտերը շատ ուրախ էին, վազում էին մարդկանց ետևից, վազում էին նույնիսկ կովերի ետևից. իսկ մի քանիսը դարձան թռչունների ստվերներ և նրանց հետ թռչում էին մարգագետիններով: Բայց Արևը նրանց բոլորին էլ գտավ, մնաց միայն մի մուգ շերտ:

- Քեզ էլ կբռնեմ,- ասաց Արևը: - Որտեղ էլ թաքնվես, կբռնեմ:

- Չես կարող,- ասաց մուգ շերտը: - Ես այնպիսի տեղ գիտեմ, որտեղ ինձ երբեք չես գտնի:



Աչքերդ փակի՛ր ու հաշվի՛ր մինչև տասը, իսկ ես կթաքնվեմ:

Արևն անցավ թուխպի ետևը, հաշվեց մինչև տասը ու դուրս եկավ:

- Թաքնվել է մեկնումեկի ետևը ու դարձել նրա ստվերը,- մտածեց Արևը:

Նա լուսավորեց բոլոր անկյունները. Մութը չկար ու չկար: Շատ լուսավորեց Արևը, բայց այդպես էլ չգտավ. չէր էլ կարող գտնել, որովհետև Մութը հարմար տեղ էր թաքնվել՝ սանդուղքի տակ՝ նկուղում:

- Ի՜նչ հաճելի է այստեղ,- մտածեց Մութը: - Այլևս դուրս չեմ գա:

Ու դուրս չեկավ: Ահա թե ինչու՝ սանդուղքի տակ գտնվող նկուղում միշտ մո՜ւր-մուր է:

ծխնելույզ *- խողովակ, որտեղից դուրս է գալիս վառարանի ծուխը*
անշտապ *- առանց շտապելու*
նահանջել *- ետ գնալ, ետ քաշվել*
թուխպ *- ամպ*
խորշ *- որևէ բանի վրա առաջացած ճեղք կամ փոս*
սանդուղք *- աստիճան*
նկուղ *- տան (շենքի) ներքևի հարկը, որ սովորաբար գտնվում է գետնի մեջ, գետնահարկ*

✍ ***Պատմի՛ր ըստ վերնագրերի.***

ՄՈՒԹՆ ՈՒ ԼՈՒՍԻՆԸ

ԱՐԵՎՆ ԱՎԵԼԻ ՈՒ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՑԱՎ

ԱՐԵՎՆ ՈՒ ՄՈՒԹԸ

ՄԻ ՅՔԵՉ ՓՐԿՈՒԹՅՈՒՆ

✍ ***Քո կարծիքով՝ մութն ինչո՞ւ է նկուղ սիրում:***

✍ Հանելուկ հորինի՛ր մուրի մասին:

Սուր նկարի՛ր:

✍ Ի՞նչ կարող ես պատմել գիշերվա մասին:

✍ Իսկ առավոտի մասին ի՞նչ կպատմես:

✍ Պատմություն հորինի՛ր:

ՍՈՒԹՆ ՈՒ ԱՆՏԱՌԸ

ԳՐՔԻՑ ՓԱԽԱԾ ՄԿՆԻԿԸ

Մկնիկն ամբողջ կյանքում ապրել էր բարակ, էժանագին գրքույկում, որի մեջ նկարներով փոքրիկ պատմություններ կային: Մկնիկը շատ էր ձանձրացել և մի օր որոշեց փոխել բնակարանը, գտնել այնպիսի տուն, որի բուղբը բանի պետք լիներ, գոնե նրանից պանրի հոտ գար: Նա հավաքեց ուժերը ու, որ չքռա՜վ, հայտնվեց իրական կյանքում՝ իսկական մկների մոտ:

- Սքաուշ,- շատ վախեցավ մկնիկը. կատվի հոտ էր առել:

- Ի՞նչ ասաց սա, - զարմացան կողքի մկները, որ ոչ մի բան չէին հասկացել նրա ասածից:

- Սփլում, բալս փլում, - ասաց մկնիկը: Խեղճը միայն իր գրքի կենդանիների լեզվով էր խոսում:

- Երևի ուրիշ երկրից է եկել, - ասաց մի բոշակառու մուկ, որը երկար ժամանակ մի մեծ նավի վրա էր ծառայել:

Նա փորձեց անգլերեն խոսել նորեկի հետ: Մկնիկը ոչինչ չհասկացավ ու ասաց.

- Սիխի փնիշ, բրոիք:

- Ո՜չ, սա անգլիացի չէ, - ասաց «նավաստին»:

- Բա ո՞վ է նա, որտեղի՞ց է հայտնվել:

- Դե արի ու գլուխ հանիր, բե ով է:

Ու խեղճ մկնիկի անունը դրեցին Արի ու գլուխ հանիր: Մկները միշտ խաղում էին նրա հոգու հետ, ձեռ առնում.

- Լսի՛ր, ա՛յ Արի գլուխ հանիր, դու ինչպիսի՞ պանիր ես սիրում՝ բրի՞նձ, բե՞ բել:

- Սփլինգ, քրոն սիսիցաիր, - պատասխանում էր գրքի մկնիկը:

- Դե լավ, բարի գիշեր, - ծիծաղում էին մկները: Իսկ ամենափոքրերը քաշում էին նրա պոչը, որ բարկացնեն նրան ու վրան ծիծաղեն:

- Սոոնգ, սփլաշ սքուափ:

Մի անգամ մկները ջրաղաց գնացին, որտեղ պարկերով ալյուր կար: Նրանք ծակեցին պարկերը և սկսեցին ալյուր խժռել: Լսվում էր մկների ատամների համերաշխ խրթխրթոցը.

- Խը՛րթ, խը՛րթ, խը՛րթ:

Գիտե՞ք՝ ուտելիս բոլոր մկները այդպիսի ձայն են հանում: Բայց արի ու տես, որ գրքի մկնիկի ատամների ձայնն էլ էր տարբերվում մյուսների ատամների ձայնից:

- Քրեք, սքրեք, սրեք:

- Լսիր, գոնե մկնավարի ուտել սովորիր, - փնթփնթում էր «նավաստի» մուկը: - Երե դու նավի վրա լինեիր, քեզ վաղուց ծովը նետած կլինեին: Այսր քո չփչփոցը զզվելի է:

- Քրենգ, - պատասխանեց մկնիկը ու կրկին մտավ պարկի մեջ՝ ալյուր ուտելու:

«Նավաստին» նշան արեց, ու բոլորը սուս ու փուս հեռացան ջրաղացից՝ գրքի մկնիկին թողնելով բախտի քմահաճույքին: Նրանք համոզված էին, որ սա չի գտնի տունդարձի ճանապարհը: Իսկ մկնիկը, էշի ականջում քնած, շարունակում էր ալյուր խժռել: Երբ նկատեց, որ մենակ է մնացել, արդեն շատ էր մութ, ինչպե՞ս տուն գնար:Մկնիկը որոշեց գիշերել ջրաղացում: Նա արդեն ննջում էր, երբ մթության մեջ երկու ղեղին կրակ փայլեց, լսվեց չորքոտանի որսորդի ոտքերի թփթփոցը. դա կատուն էր:

- Սքաշուշ, - սարսափած ծվաց մկնիկը:

- Գրագրան, - պատասխանեց կատուն:

Պարզվում է, որ նա էլ էր գրքից: Իսկական կատուները նրան դուրս էին արել, որովհետև նա չէր կարողանում սովորական «մյաու» ասել: Վտարված մուկն ու կատուն երդվեցին երբեք չբաժանվել: Ամբողջ գիշեր նրանք զրուցում էին իրենց գրքային լեզվով ու շատ լավ էլ հասկանում էին իրար:

վտարված *- հալածված, դուրս արված, հեռացված*

չորքոտանի *- չորս ոտք ունեցող*

Պատմության մեջ գտի՛ր մկնիկի խոսքերը: Գրի՛ր՝ քո կարծիքով մկնիկը ի՞նչ է ուզում ասել:

Սքաշուշ - _____

_____

_____

Ամբողջ գիշեր ի՞նչ էին զրուցում մուկն ու կատուն, փորձի՛ր հորինել:

Մուկ դու որտեղի՞ց հայտնվեցիր:

Կատու _____

_____

Մուկ _____

_____

Կարդու _____

_____

Մուկ _____

_____

Կարդու _____

_____

Մուկ _____

_____

Կարդու _____

_____

✍ *Ինչպիսի՞ն են այս հեքիաթի իսկական մկները:*

_____

_____

✍ *Ինչո՞ւ ես այդպես կարծում:*

_____

_____

_____

_____

✍ *Կապվի անունից այնպե՛ս պատմիր գրքի մկան մասին, որ սովորական մկները ընդունեն նրան:*

_____

_____

_____

_____

_____

✍ *Արագրի՛ր՝ ընդգծված բառերը փոխարինելով իմաստով մոտ ուրիշ բառերով ու արտահայտություններով: Արտագրելուց հետո պատմությունը կշարունակես:*

Մկները գնացին պաշար հավաքելու և <u>տուն վերադառնալիս</u> գտան մի փայլփլուն բար: Նրանք վերցրին այդ բարը՝ չիմանալով, թե ինչ փորձանք է բերելու իրենց գլխին: Ճանապարհին հանդիպեցին <u>հալածված</u> մի մկան, որը քնելու տեղ չուներ: Սրան էլ վերցրին ու մտան տուն:

✍ *Պատմություն հորինի՛ր:*

ԾԻԾԱՂԵԼԻ ՍԱՐԳԿԱՆՑ ՔԱՂԱՔԸ

ՃՊՈՒՌՆ ՈՒ ՄՐՋՅՈՒՆԸ

Թռի-վռի մի ճպուռ,
Ողջ ամառը շուռումուռ.
Երգեց, ճռաց, ճռճռաց:
Մին էլ՝ ըհը, ձմեռը
Փռեց իրա թևերը,
Բացեց գորգը սպիտակ,
Դաշտերն առավ ձյունի տակ:
Անցան պայծառ օրերը,
Էլ ո՞րն ասեմ, էլ ո՞րը,
Երբ ամեն մի թփի տակ
Թե սեղան կար, թե՝ օթյակ:
Եկան օրեր ցրտաշունչ,
Ճպուռն ընկավ լուռումունջ.
Քաղցած փորին էլ ի՞նչ երգ,



Յուրտը տարավ ոտ ու ձեռք:
Զընգըր-զընգըր դողալով,
Ծանր-ծանր սողալով,
Նա մրջյունին ասում է.
- Գլխիդ մատաղ, սանամե՛ր,
Մի ճար արա, շունչ առնեմ,
Յրտից, սովից չմեռնեմ.
Կերակրի՛ր, տաքացրո՛ւ,
Մինչև գարուն ապրեցրո՛ւ:
- Ի՞նչ խաբար է, սանի՛կս,
Զարմանում եմ, ջանի՛կս.
Չաշխատեցի՞ր ամառը,
Ասա՛, ի՞նչ էր պատճառը:
- Էդպես բանի, սանամե՛ր,
Էլ ժամանակ ո՞վ ուներ.
Էն խոտերում բուրավետ
Երգում էինք մերոնց հետ:
- Ուրեմն՝ դո՞ւ:
- Այո՛, ես...
Ողջ ամառը դեն ու դես
Երգում էի մշտապես:
- Երգո՞ւմ էիր, շատ բարի,
Այժմ էլ բռնի վեր-վերի,
Քամին ծափ տա՝ դու պարի:

ցրտաշունչ	*- շատ ցուրտ, ցուրտ փչող*
լուռումունջ	*- անձայն, առանց ձայն հանելու, սուսիկ-փուսիկ*
սանամեր	*- սանիկի մայրը*
ճար	*- հնար, օգնություն*
ի՞նչ խաբար է	*- էս ի՞նչ ես ասում, այդ ի՞նչ բան է*
բուրավետ	*- անուշահոտ, անուշ հոտ ունեցող*
մշտապես	*- միշտ*
վեր-վերի բռնել	*- պարել , ցատկոտել, թռչկոտել*
օրյակ	*- պատշգամբ, ննջասենյակ*

✍ *Ի՞նչ է նշանակում.*

բոի-վոի մի ճպուռ _____

ողջ ամառը շուռումուռ _____

ցմեռը փոեց բևերը _____

ցուրտը պարավ որ ու ցեռը _____

շունչ առնել _____

✍ ***Շարունակի՛ր համառոտ պատմել առակը:***

Ճպուռը ամբողջ ամառ երգեց, ոչ մի գործ չարեց: Ցմեռն եկավ:

_____

_____

_____

_____

✍ ***Գրի՛ր ցմռան մասին պատմող հատվածը և նկարի՛ր:***

_____

_____

_____

✍ ***Նկարագրի՛ր մրջյունի բույնը և նկարի՛ր:***

_____

_____

_____

_____

✍ ***Ինչպիսի՞ն էր այս մրջյունը. ինչո՞ւ:***

_____

_____

_____

✍ *Իսկ ճպուռն ինչպիսի՞ն էր. ինչո՞ւ:*

✍ *Ճպուռին մեղադրի՛ր, իսկ մրջյունին արդարացրո՛ւ:*

✍ *Հիմա էլ ճպուռին ներս չթողնելու համար մրջյունին մեղադրի՛ր:*

✍ *Պատմություն հորինի՛ր.*

ԾՈՒՅԼ ՄՐՋՅՈՒՆԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

ԳԱՅԼՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Գայլն անտառից
Փախավ գեղը.
- Նեղն եմ, նեղը,
Ասավ կատվին,
Ասլան բալա,
Քո հոր պատվին
Մի ճար արա:
Մի տես հլա,
Որսորդ ու շուն,
Թազի, բուլա
Միսս են կրծում,
Ինձ հալածում:
Ա՛յ կտրվի
Դրանց հոտը,
Մի մարդ ցույց տուր,
Պահվեմ մոտը:
- Ա՛յ ցեղակից, - գոչեց կատուն,
Գնա մտիր Մարոյենց տուն,
Նա չափազանց բարի կին է:
- Ես էլ գիտեմ, որ անգին է,
Բայց որ նրա հորքն եմ կերել ...
- Բկիդ կանգներ, լավ չես արել:
Ա՛յ, Դավրի մոտ, կուզե՞ս՝ կանչեմ:



- Նրանցից էլ ես կամաչեմ.
Հենց ամառը
Կերա Դավթի փոքրիկ զառը ...
- Ու՞մ ասեմ էլ ...
Հա՜, մեր Զաքին:
- Էս գարունն էլ
Նրա մաքին ...
- Ո՞վ մնաց էլ.
Հա՜, երեցը:
- Էս աշնանն էլ՝
Նրա էծը ...
- Ա՛յ դու ուտես
Չոռի մեծը:
Քանի՞սն եղավ՝
Հի՜նգը ... վե՜ցը ...
Ա՛յ անամոթ,
Ի՞նչ երեսով
Դու գյուղ մտար,
Ի՞նչ է, ուրիշ
Տեղ չգտա՞ր:
Գյուղն հիմա՞ր է,
Որ թշնամուն
Պատսպարե:
Ով ինչ բրի,
Էն կխրի:

ենթն եմ	*- ենթության մեջ եմ*
ապան բալա	*- առյուծի ձագ*
նաբ	*- հնար, միջոց, օգնություն*
բազի	*- շուն*
բուլա	*- շան ձագ*
երեց	*- ավագ քահանա, մեծավոր*
պահվել	*- բաքնվել*
չոռ	*- ցավ, հիվանդություն*
խրթել	*- ուրել, խժռել*
մաքի	*- ոչիար*
պատսպարե	*- մնալու, ապրելու, բաքնվելու տեղ տա*

✍ *Ի՞նչ է նշանակում*

նեղն եմ - _____

միաս են կրծում - _____

կպրվի դրանց հոպը - _____

ի՞նչ երեսով գյուղ մտար - _____

✍ *Կարո՞ղ ես թվարկել գայլի կերած կենդանիներին:*

Մարոյի հորքը, _____

_____

✍ *Այնպես պատմիր այս գայլի մասին, որ որևէ մեկը նրան տուն թողնի:*

_____

_____

✍ *Հիմա էլ հակառակն արա. այնպես պատմիր գայլի մասին, որ ոչ ոք նրան չընդունի:*

_____

_____

✍ *«Ով ինչ ցանի, այն կհնձի» ասացվածքը ի՞նչ կապ ունի առակի գայլի հետ:*

_____

_____

✍ *Ո՞ր ստեղծագործություններում գայլ կա, գրի՛ր դրանց վերնագրերը:*

«Գայլն ու կատուն» _____

_____

✍ *Հիմա էլ ինքդ հորինի՛ր։*

ԾՈՒՅԼԸ

ԿԱՆԱՉ ԱԽՊԵՐ

Է՛յ, կանաչ ախպեր,
Է՛յ, ճանաչ ախպեր,
Արի, քեզ հետ բեր
Արևի շողեր.
Բեր անուշահոտ
Ծիլ, ծաղիկ ու խոտ,
Կարկաչուն վտակ,
Երկինք կապուտակ,
Խատուտիկ հավքեր,
Զրնգան երգեր,
Գառների մայուն,
Խաղ, ուրախություն.
Է՛յ, կանաչ ախպեր,
Է՛յ, ճանաչ ախպեր:



ճանաչ - *ծանոթ*
հավք - *թռչուն*
զրնգուն - *բարձր, զիլ ձայն ունեցող*
մայուն - *գառների ձայնը*

✍ *Բանաստեղծության մեջ ինչպիսի՞ն են ծիլը, ծաղիկը, խոտը, վտակը, երկինքը, հավքերը, երգերը:*

ամուշահոտ *ծիլ*

_____ *խոտ* _____ *երկինք*

_____ *ծաղիկ* _____ *հավքեր*

_____ *վտակ* _____ *երգեր*

✍ *Երբ կանաչ ախպերը գա, ի՞նչ է բերելու. շարունակի՛ր:*

արևի շողեր, _____

_____

_____

✍ *Քեզ դուր եկած հատվածը բանաստեղծությունից դուրս գրի՛ր:*

_____

_____

_____

_____

✍ *Ինքդ գարունին հրավեր գրի՛ր:*

_____

_____

✍ *Հիմա ինքդ հորինի՛ր:*

ԻՆՉ ՊԱՏԱՀԵՑ, ԵՐԲ ԳԱՐՈՒՆԸ ՔԱՂԱՔ ՄՏԱՎ

_____

_____

_____

_____

_____

_____

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆՈՒՇԱԿ..... ԴԱՋԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ..... 3
ՉԱԼ ԿԱՉԱՂԱԿԸ..... ԱԹԱԲԵԿ ԽՆԿՈՅԱՆ..... 6
ԵՍ..... ԱԹԱԲԵԿ ԽՆԿՈՅԱՆ..... 8
ԱՐՏՈՒՅՏՆ ՈՒ ԵՐԿԻՆՔԸ..... 10
ՄՈՒԿԸ ՄԿԱՆ ԽՆԱՄԻ ԿԼԻՆԻ..... 12
ԽԽՈՒՆՋՆ ՈՒ ՍՈՒՆԿԸ..... ԱԹԱԲԵԿ ԽՆԿՈՅԱՆ..... 14
ՃՈՒՏԻԿԸ..... ԿՈՐՆԵՅ ՉՈՒԿՈՎՍԿԻ..... 16
ԱԾՈՒՆ..... ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ..... 19
ԲԱՐԱԿ ԹԵԼԸ..... ԼԵՎ ՏՈԼՍՏՈՅ..... 22
ՏԵՐԵՎԱԹԱՓ..... ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ..... 24
ԱՐԵՎԻ ՀՐԱՄԱՆԸ..... ԴԱՋԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ..... 27
ԳԵՏԱԿԸ..... ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ..... 30
ԱՐԵՎԻ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐԸ..... ԴԱՋԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ..... 32
ՃԱՆՃԸ..... ԱԹԱԲԵԿ ԽՆԿՈՅԱՆ..... 35
ԱՂՎԵՍՆ ՈՒ ՍԱԳԵՐԸ..... ԳՐԻՄ ԵՂԲԱՅՐՆԵՐ 38
ԱՆՃՈՌՆԻ ՃՈՒՏԻԿԸ..... ՀԱՆՍ-ՔՐԻՍՏԻԱՆ ԱՆԴԵՐՍԵՆ..... 41
ԿԱՑԻՆ ԱԽՊԵՐ..... ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ..... 43
ԾԱՂԻԿՆԵՐԸ..... ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ 46
ՄԱՆՈՒԿՆ ՈՒ ՋՈՒՐԸ..... ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ..... 49
ՀՆԱՐԱԳԵՏ ՆԱՊԱՍՏԱԿԸ..... ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆ..... 52
ԻՐԻԿՈՒՆ..... ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ..... 55
ՉՄԵՌ..... ԱԹԱԲԵԿ ԽՆԿՈՅԱՆ..... 59
ՍՈՒՏԼԻԿ ՈՐՍԿԱՆԸ..... ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ..... 62
ՈՉ ՄԻ ԲԱՆԻՑ ՄԱՐԴՈՒԿԸ..... ՋԱՆԻ ՌՈԴԱՐԻ..... 68
ԹԱՐՍ ՀԱՐՑԵՐ..... ՋԱՆԻ ՌՈԴԱՐԻ..... 71
ՊԱՀՄՏՈՑԻ..... ԴՈՆԱԼԴ ԲԻՍԵԹ..... 75
ԳՐՔԻՑ ՓԱԽԱԾ ՄԿՆԻԿԸ..... ՋԱՆԻ ՌՈԴԱՐԻ..... 78
ՃՊՈՒՌՆ ՈՒ ՄՐՋՅՈՒՆԸ..... ԱԹԱԲԵԿ ԽՆԿՈՅԱՆ..... 82
ԳԱՅԼՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ..... ԱԹԱԲԵԿ ԽՆԿՈՅԱՆ..... 86
ԿԱՆԱՉ ԱԽՊԵՐ..... ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ..... 90

Գիրքը կազմեցին՝

Աիդա Պետրոսյանը

և _____

Նկարազարդեցին՝

Արտակ Բաղդասարյանը

և _____

Սիդա Թելմանի
Պետրոսյան

ՄԱՏԵՆԻԿ

Մայրենիի գիրք-տետր
2-րդ դասարանցու համար
1-ին մաս

Խմբագիր՝ *Ա. Դավթյան*
Գեղ. խմբագիր
և նկարիչ՝ *Ա. Բաղդասարյան*
Տեխն. խմբագիր
և էջադրող՝ *Ս. Սարգսիկյան*
Սրբագրիչ՝ *Ա. Համբարձումյան*

Հայաստանի Հանրապետության
Լուսավորության նախարարության
«ՆՈՐ ԴՊՐՈՑ»
հրատարակչություն
1995թ. Երևան

Ստորագրված է տպագրության 10.07.1995թ.: Թուղթ 60x90 1/8:
Տպագրությունը՝ օֆսեթ: Ծավալը՝ 12 տպ.մամուլ: Տպաքանակը՝ 60000:

ՀՀ Լուսավորության նախարարության «Նոր դպրոց» հրատարակչություն:
Երեւան, Սպորտինտերնի 73:

Տպագրված է ՀՀ կառավարության գործերի կառավարչության
«ՊԱՐԲԵՐԱԿԱՆ» տպարանում:
Երեւան, Արշակունյաց 2: